ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10(3)
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ

ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
14.11.2024Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 23 անդամները, բացակայում են՝ Անահիտ Խեչոյանը, Նորիկ Մալխասյանը, Բաբկեն Եփրեմյանը և Դավիթ Պապոյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյանը, համայնքի ղեկավարի գլխ. խորհրդական Վ.Չիլինգարյանը, համայնքի ղեկավարի տեղակալ Գ.Գրիգորյանը, համայնքի ղեկավար օգնականներ Ե.Սահակյանը, Ա.Ալեքսանյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Գ.Աֆյանը, Ս.Բալաբեկյանը:

Նիստը վարում է Չարենցավան համայնքի ղեկավար Հ. Շահգալդյանը:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>

Ձեզ եմ ներկայացնում Չարենցավան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական թիվ 3 նիստի օրակարգի նախագիծը.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների դրույթներով. ***առաջարկում եմ***

1. Հաստատել Չարենցավան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական թիվ 3 նիստի օրակարգը՝

1) Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:
2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքը (ք.Չարենցավան, գ.Ալափարս, գ.Արզական, գ.Բջնի, գ.Կարենիս, գ.Ֆանտան բնակավայրեր) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-7 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը՝ գլխավոր հատակագծի և գոտևորման մասերով, հաստատելու մասին:
3) Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքը վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

4) «ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Կոտայքի մարզի Ֆանտանի բազալտի հանքավայրի հարավային տեղամասի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրությունների կատարմանը նախնական համաձայնություն տալու մասին:
5) Համայնքային շահերի պաշտպանության նպատակով իրավասու դատարան հայց հարուցելու մասին:
6) Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
7) Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական թիվ 4 նիստի գումարման օրը սահմանելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը՝ օրակարգային հարցերի վերաբերյալ:

Կողմ- 23 դեմ - 0 ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:

/Զեկ.Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 90-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, ***առաջարկում եմ.***

1. ***ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ <u>5500.0</u> ՀԱՋ. ԴՐԱՄ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼ՝***

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրի անվանումը	Հոդվածի NN	Ընդամենը	Բյուջեի ավելացում		Ընդամենը
						Վարչ. մաս	Ֆոնդ. մաս	
01	06	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դաս. չպատկանող/	4823	10400,0	5000,0	0	15400,0
08	4	2	Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ	4819	700,0	500,0	0	1200,0

2. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 23 դեմ- 0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքը (ք.Չարենցավան, գ.Ալափարս, գ.Արզական, գ.Բջնի, գ.Կարենիս, գ.Ֆանտան բնակավայրեր) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-7 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը՝ գլխավոր հատակագծի և գոտևորման մասերով, հաստատելու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի 54-րդ կետով, ***առաջարկում եմ.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքը (ք.Չարենցավան, գ.Ալափարս, գ.Արզական, գ.Բջնի, գ.Կարենիս, գ.Ֆանտան բնակավայրեր) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-7 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը՝ գլխավոր հատակագծի և գոտևորման մասերով՝ համաձայն ***հավելվածի:***
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 23 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքը վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ***առաջարկում եմ.***

1. Թույլատրել Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքը 25 (քսանհինգ) տարի ժամկետով, մրցութային կարգով տրամադրելու համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 22 դեմ-0 ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/

Լսեցին.

4. ***«ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Կոտայքի մարզի Ֆանտանի բազալտի հանքավայրի հարավային տեղամասի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրությունների կատարմանը նախնական համաձայնություն տալու մասին:***

/Զեկ. Ս.Բալաբեկյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման 28-րդ կետի, ***առաջարկում եմ.***

1. «ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Կոտայքի մարզի Ֆանտանի բազալտի հանքավայրի հարավային տեղամասի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրությունների կատարմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունն ու տեսագրությունը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 13 դեմ-0 ձեռնպահ-10

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/

Լսեցին.

5. Համայնքային շահերի պաշտպանության նպատակով իրավասու դատարան հայց հարուցելու մասին:

/Զեկ. Վ.Մուսայելյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազի և ՀՀ դատախազության Կոտայքի մարզի դատախազության դատախազի «Առաջարկություն՝ հայց ներկայացնելու վերաբերյալ» գրությունները, ***առաջարկում եմ.***

1. Համայնքային շահերի պաշտպանության նպատակով հայց հարուցել իրավասու դատարան.
   1) Անվավեր ճանաչել Չարենցավան համայնքի ղեկավարի 26.02.2008թ. թիվ 71 որոշումը և որպես հետևանք անվավեր ճանաչել Անահիտ Սարգսյանի անվամբ 25.03.2008թ. կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:
   2) Անվավեր ճանաչել Չարենցավան համայնքի ղեկավարի 27.07.2022թ. թիվ 930 որոշումը և որպես հետևանք անվավեր ճանաչել 12.08.2022թ. թիվ 61 շինարարության թույլտվությունը, Պավել Կամոյի Գաբրելյանի անվամբ 12.08.2022թ. կատարված ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Ա. Խանջյան փողոցի 21/3 հասցեի 0,00198հա հողամասի կառուցապատման իրավունքի պետական գրանցումը:
2. Լիազորել Չարենցավան համայնքի ղեկավարի առաջին տեղակալին Չարենցավան համայնքի ավագանու անունից կնքելու պայմանագիր փաստաբանական ծառայությունների մատուցման համար:
3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածով սահմանված լիազորություններով, բացառությամբ հաշտության համաձայնություն կնքելու լիազորության, փաստաբանին տալ լիազորագիր:
4. Չարենցավան համայնքի բյուջեից գումար հատկացնել փաստաբանական ծառայությունների մատուցման և դատական ծախսերի համար:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու իրավա-հասարակական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն ղեկավար Արթուր Գալստյանը քննարկեց տվյալ որոշման ընդունման նպատակահարմարությունը, առաջարկեց արդյունքում ավելորդ ֆինանսական ծախսերից խուսափելու համար՝ ուղղված փաստաբանական ծառայության մատուցման ձեռքբերմանը: Նա առաջարկեց, որ տվյալ հողակտորների սեփականատերերը հրաժարվեն իրենց գույքից, ինչին պատասխանեց համայնքի ղեկավար Հ.Շահգալդյանը առ այն, որ իր կարծիքով ոչ մի սեփականատեր առանց դատարանի վճռի չի հրաժարվի իր սեփականությունից, իսկ Բ.Բալբաբյանը նշեց, որ տվյալ որոշումը չընդունելու դեպքում իրավական համակարգի կողմից կդիտվի որպես իր լիազորությունների չկատարում ավագանու կողմից: Տվյալ իրավական ընթացակարգերի վերաբերյալ մանրակրկիտ պարզաբանում տվեց գլխավոր մասնագետ-իրավաբան Վ.Մուսայելյանը:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 13 դեմ-10 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/

Լսեցին.

6. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 7-րդ թաղամասի 3-րդ շենքի 47 բնակարանի բնակիչ Դեզդեմոնա Անդրյանի 2024 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 5118-16, Չարենցավան քաղաքի 7-րդ թաղամասի 11-րդ շենքի 31 բնակարանի բնակիչ Մարինե Գևորգյանի 2024 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 5115-16, Չարենցավան քաղաքի 4-րդ թաղամասի 25-րդ շենքի 37-րդ բնակարանի բնակիչ Լեյլի Օզմանյանի 2024 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 5116-16 և Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամասի 3-րդ շենքի 42-րդ բնակարանի բնակիչ Ժիրայր Խոջոյանի 2024 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 5117-16 դիմումները ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին, ***առաջարկում եմ.***

1. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել **Դեզդեմոնա Արտուրիկի Անդրյանին:**
2. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել **Մարինե Շուրիկի Գևորգյանին:**
3. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել **Լեյլի Ալիխանի Օզմանյանին:**
4. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել **Ժիրայր Ռոմայի Խոջոյանին :**
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 23 դեմ- 0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/

Համայնքի ավագանու անդամ Արթուր Գալստյանը, հարց բարձրացրեց Եղիշե Չարենցի հուշասրահի վերանորոգման աշխատանքների վերաբերյալ, ինչին համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյանը տվեց հանգամանալից պարզաբանումներ: Ծավալվեց աշխատանքային քննարկում :

Լսեցին.

7. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական թիվ 3 նիստի գումարման օրը սահմանելու մասին:

/Զեկ Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, ***առաջարկում եմ.***

1. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական թիվ 3 նիստի օր և ժամը սահմանել 2024 թվականի դեկտեմբերի 20-ը, ժամը 12:00:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 23 դեմ- 0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/

Չարենցավան համայնքի ավագանու անդամներ՝

Առաքելյան Նորայր
Բաբայան Արայիկ
Բաբայան Նարեկ
Բաղդասարյան Սահակ
Գալստյան Արթուր
Գևորգյան Գևորգ
Դավթյան Կարեն
Եփրեմյան Տարոն
Թադևոսյան Նունե
Խաչատրյան Արշակ
Հարոյան Լիլիթ
Ղամբարյան Գարիկ
Մակինյան Վարդան
Մուքայելյան Վալերի
Շահգալդյան Հակոբ
Սահակյան Գառնիկ
Պալյան Գարիկ
Պետրոսյան Ավետիք
Պողոսյան Մնացական
Վարդանյան Նորայր
Վարդանյան Նորիկ
Վարդանյան Սարգիս
Վարդանյան Սևակ

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ